

Տեղեկատվություն ԱԺ պատգամավոր Տիգրան Ստեփանյանի Ազգային Ժողովի 6-րդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում կատարած աշխատանքների մասին:

Ես՝ Տիգրան Վաչիկի Ստեփանյանս, որպես ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր, միշտ հանդիպել եմ իմ ընտրողների և առհասարակ Մասիս քաղաքի և Մասիսի տարածաշրջանի բնակիչների հետ:

Նախ ասեմ, որ Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում է գտնվում <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության Մասիսի տարածքային գրասենյակը, որը մշտապես գործող կառույց է: Քաղաքացիների մեծ մասը հիմնականում այցելում են գրասենյակ և իրենց պահանջներին ու առաջարկություններն են անում: Քաղաքացիները դժգոհում են հատկապես ծանր տնտեսական և սոցիալական վիճակից, ապրուստի սակավ միջոցներից, աղքատությունից: Պահանջները հիմնականում առընչվում են քաղաքացիների նյութականի հետ, իսկ առաջարկությունների հիմնական մասը վերաբերվում է Մասիս քաղաքի և համայնքների ճանապարհների վերանորոգմանը, գիշերային լուսավորությանը, ռոտոգման և խմելու ջրի համակարգերին, իսկ ամենաշատ դժգոհությունները կոմունալ ծառայություններից են:

Ես յուրաքանչյուր ամսվա 15-ին <<Բարգավաճ Հայաստան>> կուսակցության Մասիսի գրասենյակում հանդիպում եմ իմ ընտրողների և տարածաշրջանի բնակիչների հետ: Անձամբ լսում եմ նրանց հարցերը և տեղում՝ իմ հնարավորությունների սահմաններում տալիս եմ պատասխաններ: Այդ հարցերի մեծ մասը գլոբալ հարցեր են և առնչվում են մեր կառավարությանը: Իսկ յուրաքանչյուր ամսվա վերջին ես մեր ակտիվիստների հետ միասին գրասենյակում քննարկում ենք նորից քաղաքացիների կողմից մեկ ամսվա կտրվածքով առաջարկված գրավոր և բանավոր հարցումները և տալիս պատասխաններ:

Բերեմ այդպիսի մեկ օրինակ: 2017թ. ապրիլի 28-ին ինձ են դիմել Մասիսի քաղաքի 5-րդ թաղամասի 2-րդ և 3-րդ փողոցի 14 քաղաքացիներ, որոնք տարիներ շարունակ խմելու ջուր չեն ունեցել և խնդրել են ինձ օգնության ձեռք մեկնել: Անմիջապես կազմակերպվել է խնդրի լուծումը: Ունեմ նաև կազմած աշխատանքային գրաֆիկ մեր տարածաշրջանի համայնքների բնակիչներին հանդիպելու վերաբերյալ:

2017թ. հունիսի 17-ին հանդիպում եմ ունեցել Արարատի մարզի Նոր Խարբերդ համայնքի բնակիչների հետ, ովքեր բարձրացրել են իրենց հուզող բազմաթիվ հարցեր, որոնք վերաբերվում էին գյուղամիջյան ճանապարհներին և սոցիալական վիճակին:

Համայնքի ղեկավարի և ավագանու անդամների հետ քննարկել ենք այդ հարցերը և համատեղ աշխատանքների շնորհիվ կարողացել ենք ասֆալտապատել համայնքի կենտրոնական ճանապարհը:

2017թ-ին հոկտեմբերի 18-ին հանդիպում եմ ունեցել Արարատի մարզի Սայաթ-Նովա և Հովտաշատ համայնքների բնակիչների հետ: Առաջարկված բոլոր հարցերը գրանցված են ինձ մոտ: Վերը նշված համայնքների ղեկավարների և ավագանու պատասխանատու կազմակերպությունների հետ աշխատանքներ ենք տանում բնակիչների կողմից բարձրացրած հարցերին պատասխանելու և լուծում տալու համար:

Հանդիպումների շարքը շարունակական է լինելու նաև հաջորդ տարիներին:

Կից ներկայացնում եմ մի քանի նկարներ բնակիչների հետ հանդիպումներից:



